

ԿԱՐԵՆ ԱՍՐՅԱՆԻ 11-ՐԴ ԳՈՒՇԱՍՐՑԱՇԱՐ

Հայաստանի շախմատային ֆեդերացիան 2018 թ. հունիսի 20-30-ը Ջերմուկ նշանավոր առողջարանային քաղաքում կանցկացնի Կարեն Ասրյանի հիշատակին նվիրված շախմատի միջազգային բաց մրցաշար: Մրցաշարին կարող են մասնակցել բոլոր ցանկացողները: Մրցաշարն անցկացվելու է շվեյցարական մրցակարգով, 9 տուրով:

Մրցանակներ

Մրցաշարի ընդհանուր մրցանակային հիմնադրամը կազմում է 27 000 ԱՄՆ դոլարին համարժեք ԳԳ դրամ:

1-ին տեղ	7 000
2-րդ տեղ	5 000
3-րդ տեղ	3 000
4-րդ տեղ	2 000
5-րդ տեղ	1 000
6-10-րդ տեղեր	500
11-15-րդ տեղեր	300
16-20-րդ տեղեր	200

Հատուկ մրցանակներ կանանց համար

1-ին տեղ	800
2-րդ տեղ	500
3-րդ տեղ	300

Հատուկ մրցանակներ մինչև 16 տարեկան աղջիկների համար

1-ին տեղ	250
----------	-----

Հատուկ մրցանակներ մինչև 16 տարեկան պատանիների համար

1-ին տեղ	500
2-րդ տեղ	300

Հատուկ մրցանակներ մինչև 14 տարեկան պատանիների համար

1-ին տեղ	300
----------	-----

Հատուկ մրցանակներ մինչև 2201 վարկանիշ ունեցողների համար

1-ին տեղ	250
----------	-----

Հատուկ մրցանակներ մինչև 2101 վարկանիշ ունեցողների համար

1-ին տեղ	250
----------	-----

Հատուկ մրցանակ վետերանների
/60 տարեկան եւ բարձր/ համար

1-ին տեղ	300
----------	-----

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակները բաշխվում են հավասարաչափ: Յուրաքանչյուր մրցանակակիր կարող է ստանալ միայն մեկ մրցանակ: Եթե որևէ մրցանակակիր հավակնում է երկու համարժեք մրցանակի /հիմնական և հատուկ/, ապա նրան տրվում է հիմնական մրցանակը:

Ժամակարգ

Կիրառվող ժամակարգը. 90 րոպե առաջին 40 քայլի համար, այնուհետև 30 րոպե՝ մինչև պարտիայի ավարտը (30 վայրկյան հավելումով՝ յուրաքանչյուր քայլին, սկսած առաջինից):

Խաղացանկ

20 հունիսի	բացում, 18:00
21 հունիսի	1-ին տուր, 15:00
22 հունիսի	2-րդ տուր, 15:00
23 հունիսի	3-րդ տուր, 15:00
24 հունիսի	4-րդ տուր, 15:00
25 հունիսի	5-րդ տուր, 15:00
26 հունիսի	6-րդ տուր, 15:00
27 հունիսի	7-րդ տուր, 15:00
28 հունիսի	8-րդ տուր, 15:00
29 հունիսի	9-րդ տուր, 11:00
29 հունիսի	փակում, 19:00

Մուտքավճար

2401-2450	20 000 դրամ
2301-2400	30 000 դրամ
2101-2300	50 000 դրամ
մինչև 2100 և առանց վարկանիշի	60 000 դրամ

Գրոսմայստերները, 2451 և բարձր վարկանիշ ունեցող տղամարդիկ, ինչպես նաև 2351 և բարձր վարկանիշ ունեցող կանայք ազատվում են մուտքավճարից:

Հայաստանի պատանիների առաջնությունում (10-18 տ.) 1-ին և 2-րդ տեղերը գրաված, ինչպես նաև 60 և բարձր տարիքի շախմատիստները պետք է վճարեն մուտքավճարի 50%-ը:

Յյուրանոց և սնունդ

Մասնակիցներին առաջարկվում է իջևանել.

«Արմենիա» առողջարանում: Մեկտեղանոց համարը՝ 23 000 դրամ, մեկ տեղը երկտեղանոց համարում՝ 18 000 դրամ:

«Ցենտրալ» հյուրատանը՝ մեկ տեղը երկտեղանոց համարում՝ 12 000 դրամ:

Վերը նշված գները ներառում են 3-անգամյա սնունդ:

2601-2650 վարկանիշ ունեցող տղամարդկանց, ինչպես նաև 2401-2450 վարկանիշ ունեցող կանանց տրամադրվում է անվճար մեկ տեղ առողջարանի երկտեղանոց համարում:

2651 և բարձր վարկանիշ ունեցող տղամարդկանց, ինչպես նաև 2451 և բարձր վարկանիշ ունեցող կանանց տրամադրվում են անվճար մեկտեղանոց համարներ:

Հյուրանոցային պայմանների տրամադրման կամ մուտքավճարների գանձման համար կազմակերպիչը հիմք կընդունի մասնակցության հայտ ներկայացնելու պահին շախմատիստի ունեցած վարկանիշը:

Տրանսպորտ

Մասնակիցներին տրամադրվում է ավտոբուս Երևան-Ջերմուկ-Երևան երթուղով: Տոմսի արժեքը երկու ուղղությամբ՝ 7000 դրամ:

Մեկնում. Տ. Պետրոսյանի անվ. շախմատի տուն - Ջերմուկ՝ հունիսի 20-ին, ժ. 12.00-ին:
Վերադարձ. Ջերմուկ - Երևան՝ հունիսի 30-ին, ժ. 10.00-ին:

Վճարման կարգը

Մասնակիցները կարող են վճարումներ կատարել նախապես՝ հետևյալ հաշվեհամարներին.

Հայաստանի շախմատային ֆեդերացիա
«Արարատբանկ» ԲԲԸ

դրամով՝ 1510002020290100
դոլարով՝ 1510002020290101
եվրոյով՝ 1510002020290149
ՀՎՀՀ՝ 01515033

Խնդրում ենք մասնակցության հայտերը ներկայացնել մինչև մայիսի 1-ը:

Մրցաշարի տնօրեն՝ Ֆիդե-ի վարպետ, միջազգային կազմակերպիչ Հրաչիկ Թավադյան
Հեռ՝ + 374 10 52 64 64

քարտուղար՝ միջազգային մրցավար Նունե Վարդանյան
Հեռ՝ + 374 10 55 36 30
Էլ.փոստ՝ asrianmemorial@gmail.com